



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2019 թվականի թիվ 136-Ա

ք. Երևան

«ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2019 թվականի հոկտեմբերի 04-ին հարուցված թիվ 4 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2019 թվականի հոկտեմբերի 04-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Իրավատեր) դիմումում նշված է հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող «ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից խախտում կատարելու փաստի վերաբերյալ: Ըստ Իրավատիրոջ՝ Ընկերությունը առանց հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագիր կնքելու իրականացնում է «РТР-ПЛАНЕТА», «РОССИЯ-КУЛЬТУРА», «РОССИЯ-24», «Discovery Channel» և «Animal Planet» հեռուստաձրագրերի վերահեռարձակում: Իրավատերը հանդիսանում է վերոնշյալ հեռուստաձրագրերի բացառիկ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ 2019 թվականի հոկտեմբերի 04-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2019 թվականի հոկտեմբերի 07-ին ծանուցել է Ընկերությունը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությունում Ընկերությունը հայտնել է, որ տվյալ պահին չի վերահեռարձակում դիմումում նշված հեռուստաձրագրերը: Վերոնշյալ հեռուստաձրագրերը կվերահեռարձակվեն հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքի տրամադրման պայմանագրերը Հանձնաժողով ներկայացնելուց և թույլտվություն ստանալուց հետո:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 45.1-րդ հոդվածի և 52-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 55-Ա հրամանը՝ իրականացրել է մշտադիտարկում հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակում իրականացնող Ընկերությունում, որի արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից չի վերահեռարձակվում «PTP-ПЛАНЕТА», «РОССИЯ-КУЛЬТУРА», «РОССИЯ-24», «Discovery Channel» և «Animal Planet» հեռուստաձրագրերը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքներին և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված հեռուստառադիոընկերություններն օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ձրագրերը կարող են վերահեռարձակել պայմանագրային հիմունքներով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող ընկերությունների հեռուստառադիոձրագրերը հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահեռարձակվել միայն Հանձնաժողովի թույլտվության հիման վրա:

Թույլտվությունը տրվում է, կամ դիմումը մերժվում է վերահեռարձակում իրականացնելու համար Հանձնաժողովին դիմելուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝

հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Կարճել «ԱՇՏԱՐԱԿ ԷԼԻՏ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 4 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

22 նոյեմբերի 2019թ.

ք. Երևան